

Տարօնի ժողովրդական երգեր

ԱՐՏԱՇԷՍ ՏԵՐ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ

Հետեւեալ ժողովրդական երգերը հաւաքուած են մեծամասնութեամբ՝ 1951 թ.ի ամրան, դէպի Սուրիա կատարած ազգագրական նիւթերու հաւաքման մեր երկամսեայ արշաւին ժամանակ: Փորձած ենք մեր կարելիութեան սահմանին մէջ, գրի առնել եւ կորուստէ փրկել ինչ որ արժէք կը ներկայացնէ: Ուրախ ենք որ անհատներ սիրալոյսով կերպով մեզի երգած են, ինչ որ տարիներու թաւալումը անաղարտ ձգած է իրենց մտքին մէջ:

Պահած ենք երգերը այն ձեւով որ մեզի աւանդուած են, առանց մեր կողմէ փոփոխութիւններ, յաւելումներ եւ յապաւումներ կատարելու: Այս՝ նախ այն պատճառով որ մեր իրաւասութեան սահմանէն դուրս է, եւ երկրորդ՝ այն մտածումը թէ ժողովրդական ստեղծագործութեան բոլոր պատառիկները պէտք է գրի առնուին, որպէսզի մենք ունենանք նոյն այդ բանահիւսութեան ու անկէ ալ զայն ստեղծագործող ժողովուրդին ամբողջական հոգեբանութիւնն ու նկարագիրը: Ասկէ ահա մեր հաւաքածոյին մէջ գոյութիւնը երկերու, ուր կարելի է հանդիպել անէծքներու եւ սահմաններէ դուրս նկատուող ասութիւններու:

Մեր հասկացողութեան սահմանին մէջ՝ կեղծ եւ ժողովրդական բանահիւսութեան անհարազատ տողեր ու երգեր դուրս ենք ձգած մեր հաւաքածոյէն:

Երգերուն բովանդակութենէն թելադրուած դասաւորում մը թերեւս թուի աւելի պատշաճ եւ դիտական, սակայն կը դոհանանք այս անգամ ներկայացնել մեր հաւաքած երգերը տալով իւրաքանչիւր անհատէ մեր հաւաքածը: Նիւթի այսպիսի բաժանում մը այն մտադրութեամբ որ խուսափինք ամէն անգամ կրկնելէ հաղորդողին անունը:

Ձմռանանք յիշել նաեւ թէ հոս հրատարակուած երգերը դրեթէ սամրոյջութեամբ նոր է որ լոյս կը տեսնեն: Թերեւս դանուին տողեր կամ տուններ, որոնց կարելի է հանդիպիլ այլ հրատարակութեանց մէջ, սակայն անոնք տարբերակներ ըլլալով, առած ենք զանոնք մեր հաւաքածոյին մէջ:

Նախ կու տանք Խնուսցի Գարեգինէն մեր գրի առած երգերը: Դրի առնուած են Հալեպ, 14-15 Սեպտ.ի, 1951-ին, եւ վերատեսու-բեան եմքարկուած ու յաւելումներ կատարուած՝ Պէյրութ, 29 Մարտի, 1952-ին:

Գարեգին Մկրտիչեան՝ Խնուսի (Հարք) Քաղքիկ գիւղէն: Հօր անուն՝ Միսակ: 1951 թ.ին 55 տարեկան էր եւ կը բնակէր Լաքաֆիա (Սուրիա): Արտակարգ յիշողութեան տէր մէկն էր:

ՀԱՊԸԼՊԱՆ

Հապըլպան, քնայ ու էրած
տեսայ,

Կանանչ ու կարմիր քիսայ,
Գնա հօրըդի խօսա՛,
Ինէ գիս ուրին փեսայ:

Հապըլպան ընկայ ըտ առուի
յեզին,
Զուխտ ճէյրան բուրդ կը գըզին,
Մեղքը տէրաբըռջ վըզին:

Հապըլպան, Խամբը բերդը տուն
ունիմ,
Մըջ երկաթէ սուն ունիմ,
Քառսուն քու պէս շուն ունիմ:

Սարու չայիր քաղ կ'էնենք,
Եարս եկաւ ախ կ'էնենք,
Հապըլպանէ օյ, օյ, օյ,
Մինամ սարերով օյ, օյ:

Հապըլպան ջանէ ջան,

Ջանըս քըզի դուրպան,
Էկօ երթանք ճըլոյ խան,
Մածուն չեղաւ ուտինք թան:
Հապըլպան, աղջի քու անուն
թագու,

Արի էրթանք մըր սաղուն,
Ողորմի քու հօր հոգուն,
Ձեռս դնեմ քու դոզուն:

1952 թ.ի Զատիկին՝ Հալեպ մեր այցելութեան առթիւ գտանք հետեւեալ տունը, սոյն երգին պատկանող, Թօփալ Առաքելի մօտ, գոր կու տանք հոս:

Հապըլպան, ջան է ջան,
Ջան է ջան է, ջան դուրպան
Ալուր մաղեցինք մաղերով,
Ձգտիք էփինք եղերով,
Իմ լէ ձըր պեխերով:
Հապըլպան է օյ, օյ, օյ:

ՊԱՐԵՐԳ

Հինէր նարին էր օյ օյ,
Հինէր նարին էր օյ օյ,
Հինարի ծառի վրայ,

Ձինարի ծառի վրայ,
Դըրեր էր Փաս ու բուքուլ,
Շէկիկ ծամերու վրայ:

Հինէր նարին այնք էր,
Պատի տակը կայնք էր,
Հինարի ծառի վրայ, եւլն .:

Արի մըր տուն ու գընա՛,
Դու կրակ էրէ մահանայ,

Դուռ դրացին չիմանայ .

Հինարի ծառի վրայ, եւլն .:

Բարտի ծառին ել ունեմ՝

Ըրանդ ըրանդ թեւ ունեմ .

Հինարի ծառի վրայ, եւլն .:

ՍԱՐԵՐ ՏԷՆ

Սարեր տէն գնացէ՛ք՝
Տեսնեմ զիմ հարս :
Սարեր տէն, ձորեր տէն գնացէ՛ք՝
Տեսնեմ զիմ հարս :

Արագը պուզ է բռնի,
Գանդուլս թող է բռնի :
Արագը պուզ է կտրի,

Գանդուլս թող է թափի :

Սարեր տէն, ձորեր եւլն .:

Կռունկ թռաւ մըր արտէն,

Առաւ գներքի ջահտէն,

Տարաւ մըր սէր ու սաւտէն :

Սարեր տէն գնացէ՛ք,

Տեսնեմ զիմ հարս :

ՁՈՒՆ ԷՐ ԷԿԻ

Ձուն էր էկի սարերուն,
Հալէր կաթէր քարերուն,
Եարուկն էրթէր ջրերուն,
Կըլկըլէր մըջ կըժներուն,
Էլնէր հարող փիճանուն (կամ
բիճերուն) :

Սարէն պրծայ էկայ ցած ,

Իշի դուռը կիսաբաց ,

Մտայ ներս առնենք թաժայ հաց ,

Թերմաչ թուլէն զիսի խած ,

Ընծի ինչ խածնել պիտէր ,

Ընծի զերկ ու ծոց պիտէր :

ԵԱՐԸՄ ԿՕՐԱՆԻ

Բոստան իմ ցանի էտա դարու
կող ,
Անտէր մընէր հար , էտա արտ
ու հող ,
Ձեզաւ մէկ շամամոք զրկենք
հարող փոխ :

Բոստան իմ ցանի ելեր է պառկի ,

Պղտիկ իմ սիրած հար , չըմ կընայ

թարկի ,

Ձարութեն կ'էնէ չըմ կընայ

զարկի :

ԱՆԷՄՔ

Անիծիմ անենաս ,
Խրպիս ու գողենաս ,
Բեռ բեռ ցաւերու տիրանաս :
Էլնաս հաւէն ,
Ջրըթաս խոխոման թաւէն ,

Ջրըծնաս քու մայվան ցաւէն :

Դետին բոց էղնի ,

Քու օտքերու տակ էղնի ,

Քու ուրսի սեւ աղուէնու

պառեկին էղնի :

ՔԱՄԻՆ ԷԿԻ

Քամին էկի էրան-էրան,
Քըչեց տարաւ Մըշոյ բերան,
Մըշու հաւեր թեւաւորուան,
Մըշու քոջեր սեւաւորուան(1):
Իմալ էնիմ, իմալ էնիմ,
Եար պզտիկ էր շիւար էղնիմ:

Ձուն էր էկի աշնան արտեր,
Իմալ էնիմ ես քու տարտեր:
Իմալ էնիմ, եւլն:

Ձուն էր էկի լափայ-լափայ,
Ես քու տարտէն հալայ թափայ.
Իմալ էնիմ, եւլն:

Ես իմալ ենք քու սիրուն,
Մեղքեմոմ տաս դէմ գոլուն.
Իմալ էնիմ, եւլն:

Դու պզտիկ էր քեզ սիրեցի,
Դու մեծցեր էր՝ հասրաթ մանցի.
Իմալ էնիմ, եւլն:

Իմալ էնիմ ջարայ չկայ,
Կը կարգուիմ փարա չկայ.
Իմալ էնիմ, իմալ էնիմ,
Եար պզտիկ էր շիւար էղնիմ:

ՓԱՓՈՒՌԻ

Հէլ հէլիւէ, հէլիւէ
Հէլ հէլիւէ, փափուռի:

Փափուռի շապիկ շիւայ,
Փափուռ նստի դուռ կ'իւլայ,
Եար հէլիւէ հէլիւէ,
Եար հէլիւէ, փափուռի:

Եարըս տարան մըլ գեղին,
Դուռ դրացիք կը նեղին.

Եար հէլիւէ հէլիւէ,
Եար հէլիւէ, փափուռի:

Այլ տարքերակներ եմ.
Նշխուն ջոկիկ մըլ եղին,
Եարս տարան մըլ գեղին:

կամ՝

Հեղին տարան մըլ գեղին,
Թափան խորթեր կը գեղին:

ՍԻՐԵՐԳ

Ուխտ մ'ենք կտրեր կ'էրթէնք Սըբ Սարգիս,
Ջըն տըղէն առնենք անուն էր Սարգիս.
Սարգիս ջան Սարգիս, ծառ չինար էղնիս,
Թէ օր զիս առնիս շատ տարի ապրիս,
Թէ օր զիս շառնիս, բէմուրազ մըռնիս:

1) Ձորբորդ տողին տեղ երբեմն կ'երգուի մահւ Բոթկանց տըներ սեւաւորուած:

Ծառէն ինք քաղեր տըսւերկու ճիրան,
 Ձըն տըղէն առնենք անուն էր Միհրան.
 Միհրան ջան Միհրան, եւլն.:

Հաւէն ինք քաշի տըսւերկու թեպուր,
 Ձըն տըղէն առնենք անուն Սաչատուր, եւլն.:

Ուխտ մ'ենք էրի կ'էրթէնք Սըրբ Կարապետ,
 Ձըն տըղէն առնենք անուն Կարապետ, եւլն.:

ԲԱՂԸՄԻ

Դուն ուստ կու գաս դուն Սասգեղու, բաղըմի
 Պագիկ մը տուր տանիմ տեղու, բաղըմի:

Դուն ուստ կու գաս դուն Սըլաթայ, բաղըմի
 Կարմիր էրես արուն կը կաթայ, բաղըմի
 Պագիկ մը տուր տամ զօլաթայ, բաղըմի
 Բաղըմի պաղջայըմի,
 Կիւլըմի պիւլ պիւլըմի,
 Սարըմի սիւմպիւլըմի:

Դուն Հագեր էր կարմիր ճուպէն, բաղըմի,
 էլի կայնի տանքի խուպէն, բաղըմի,
 Ինչ օր կ'էնէր քաք պապ Նուպէն, բաղըմի:

ՊԱՐԵՐԳ

Հուն չունիս եար ջան,
 Տուն չունիս եար ջան:

Հագեր էր Քըստան,
 Գացեր էր պոստան.
 Հուն չունիս, եւլն.:

Հագեր էր սօլեր,
 Գացեր էր կօլեր.

Հուն չունիս, եւլն.:

Հագեր էր ճուպէն,
 Կայներ էր խուպէն.
 Հուն չունիս, եւլն.:

Ֆինջինով ըլիս,
 Դու Հորթուն կ'ըլլիս.
 Հուն չունիս եար ջան,
 Տուն չունիս եար ջան:

ԿՈՎԱՆՏ

Հա գլորի վարի վարի,
 Տէ գլորի շուտ շուտ արի:

Եարըս մարան մըջ գեղին,
 Դուռ դրացիք կը նեղին.
 Հա գլորի, եւլն.:

Գացի դացի հեռըցայ,
 Խամըր բերդին մօտեցայ.
 Հա գլորի, եւլն.:

Աղջիկ անունդ Սարէ,

Քու աչքեր խառ ու մառ է.
 Քու տարտեր դիս կը վառէ.
 Հա գլորի վարի վարի,
 Տէ գլորի շուտ շուտ արի:

ՍԱՐ, ՍԱՐ

Սար, սար իմացէք
 Տարտերս շատ ին՝ դիմացէք:
 Սարեր ձորեր հով էրէք,
 Իմ տարտին տարման էրէք:

Արի մըր տունն ու գընա՛,
 Դուռ դըրացին չիմանայ:
 Սար, սար եւլն.:

Էրզրում չարսու պազար,
 Իչինտէ պիր դըզ կազար,
 Այինտա տիվիթ խալամ,

Օթըրմըշ տարտըմ եազար:
 Սար, սար եւլն.:

Ի՞նչ է էս սէր ու սաւտան,
 Թողիմ կորիմ քու տարտէն:
 Սար, սար եւլն.:

Սրտիկ մալուլ մը կենայ,
 Տունէն մարդու չը մընայ.
 Սար սար իմացէք,
 Տարտերս շատ ին՝ դիմացէք:

ՄԷՄՁԱՐԷ

Մէմզարէ, հա՛ Մէմզարէ.
 Թունտիր վառիմ; փոշին հանիմ,
 էտ ինչ խըշիմ կնիկ մ'իմ ես:
 Կուժը չառած ջուրի կ'երթամ,
 էտ ի՞նչ խըշիմ եւլն.:

Խըմոր չեղած հաց կ'եփիմ,
 էտ ինչ խըշիմ, եւլն.:
 Քըթոց չառած կաթ կը կըթիմ,
 Հա Մէմզարէ Մէմզարէ:

Թունտիր վառիմ ցան չկայ,

Փըլաւ կ'էփիմ եղ չկայ,
 Տոլմա փաթթիմ թուփ չկայ,
 Հա՛ Մէմզարէ, Մէմզարէ:

Մէմզար դացի խիարնոց,
 Խիար դոմեց լըցեց ծոց.
 Հա Մէմզարէ, Մէմզարէ:

Մէմզար դացի հէրանց տուն,
 Ե՞րբ միտք կ'իզայ դպոնայ տուն,
 Ճըժեր մանցած ին՝ անքուն.
 Հա՛ Մէմզարէ, Մէմզարէ:

ՈՍՊ ՃԱՐԵԾԷՔ

Ոսպ ճարեցէք պասն էկաւ,
 Շընկընկալէն հարսն էկաւ:

Դուռ բաց բարի մարդ էկաւ
 Հինգ լանկառի վարդ էկաւ:
 Ոսպ ճարեցէք, եւլն.:

Քու գալը ընծի բարի,
 Ըսիմ պար, չըսիմ պար,
 Գետին դառնայ դուքուդար:
 Ոսպ ճարեցէք, եւլն.:

Խուկլի բաղարջ ու հատիկ,

Բարով իզայ մըը Չատիկ :
Ոսպ ճարեցէք, եւլն . :

Տէրընտէս, դարման ու կէս,
Առնինք չուան վազինք դէզ,
Միջինք էր Մեծ Պասի կէս :
Ոսպ ճարեցէք, եւլն . :

Փոթորիկն էր թուման,

Ծառզարդարին դարձ կը տանին,
էտի շարաթ քարքաշան,
Ճըժեր հալան ու մաշան :
Ոսպ ճարեցէք, եւլն . :

Ծառզարդարին դարձ կը տանին,
Փեսի հոգին կը հանին :
Ոսպ ճարեցէք պասն էկաւ,
Ջընկզընկալէն հարսն էկաւ :

ԽԱՂԵՐ

Այս ամուսն տակ կու տանք
մանկական խաղեր :



Հէլ հէլ, Մարայ հէլ,
Ալի խօճէն ուլ մը դնեց,
Դանկով մորթեց, չախուով
քերթեց,
Գացէք ըսէք լակլակ բաշուն,
Իզայ քերթէ օտու կաշուն,
Տանէ ձգէ իր բայ ճաշուն :

Բերէն էկաւ Խըլաթայ,
Եղն ի վրէն կը կաթայ,
էնիմ հալուայ ու կաթայ,
Ամէկին մէկ ու մէկ,
Իմ տղին հազար ու մէկ :

ՄԸՄԸԼԼԷԿ

Մըմըլլէկ, ջան մըմըլլէկ,
Մըմըլլէկ, հէչ պալէթայ,
Պալէթայ զըր հալուայ,
Խըմաթըն պաշ իւստունա,
Պաշն ի տիվան իւստունա :

Գացի մտայ եղի մը դոմիկ,
Գտայ եղի մը բղիկ,
Չարկի դետին կոտրեցի,
Կանթն ի փէտէս էձգեցի,
Տարայ Սանամօր էրթկէն

Ջընկ, չընկ ու չարխանայ,
Բու պապ բունեց պարխանայ,
Պարխանի բեռներ բինուկ,
Բու ջոջկայ թաթեր հինուկ :

կախեցի -
Սանամէր սան ծակն ի վեր,
Բաւորկին քար ծակն ի վեր :

ԲԻՐՁԷՆԻ

Տիգօ, Տիգօ Բէրզէնի,
Տարայ Տիգօ Բէրզէնի :

Փորն էր ուռի ձմերկից :

Ասիկ Տիգօ խայտէն է,
Կաղզուայ ձորէն է :

Տիգօն դնաց քեռու տուն
Բեռին ըսաւ քութայ շուն :

Տիգօն էկաւ սեւ Բրից,

Տիգօն դացի դըրդըկի,
Վախնամ դըրուխ չըրդըկի :

Գրտաւ պոչիկ զարկեց դօտին,
Ըսաւ մեռնիմ քրդի, քու անուշ

ԱՆԷՄՔ

Հօտին, Հոգոց Հանգուցելոց,
Օրի պառկար ըտ չոր դետին, Բռնիմ ձեռքը թալիմ փողոց,
էրթանք մըն տուն պառկի վըր Վրէշ վառիմ կրակ ու բոց.
բալայ խոտին: Դուն ըսէ ամին:

Հետագայ երգերը գրի առնուած են Ազնիւ Սեւոյեանէ, Լա-
թափա, 22-23 Սեպտ.ի, 1951-ին:

Ազնիւ Սեւոյեան՝ Ախլաթի Սոզորդ գիւղէն: Հօր անուն՝
Աւետիս, մօր անուն՝ Սօսէ: 1915 թ.ին հինգ տարուամ հարս: 1951
թ.ին 60 տարեկան էր եւ կը բնակէր Լաթափա:

ՈՂՔԵՐԳ(2)

Տարտ օյ օյ, տարտ օյ,	Աստուած սիրէք իմ հօր չըսէք
տարտ օյ օյ,	Ռէս Պետրոս,
Մուրատ դետ ին կապած	Տարտ օյ, օյ,
պանտեր,	Իմ ընկերն էր ընկած ըռէզ,
Տարտ օյ, օյ,	Տարտ օյ, օյ:
Ես քէ կ'առնենք չթոր տարտեր,	Աւար թալէք Սըրբ Թովհաննէս
Տարտ օյ, օյ:	Տարտ օյ, օյ,
Մուրատ դետ խոչ Մուրատ դետ,	Պալքի Սըրբ Թովհաննէս չարա
Տարտ օյ, օյ,	կ'ընէ,
Թորիմ էրթամ Հարենից ետ,	Տարտ օյ, օյ:
Տարտ օյ, օյ,	Աղջիկ Սանօ, Աստուած սիրես,
Պաժնէ Ռուբէն թո բերէիր հետ,	Տարտ օյ, օյ,
Տարտ օյ, օյ:	Իրեք տարի էրիկ չէնես,
Մուրատ դետ կապած քալաք,	Տարտ օյ, օյ,
Տարտ օյ, օյ,	Մէկ Մուքէլիս խաթըր էնես.
Ես քէ կ'առնենք չթոր Փալաք.	Տարտ օյ, օյ:
Տարտ օյ, օյ:	

2) Դեպքը կը պատահի Ախլաթի Թեզուտ գիւղին մէջ: Ռուբէն անունով
գիւղացի մը երբ լեռնէն սայլով ցորեմի դեգեր կը բերէ, սայլը կը շրջի եւ Ռու-
բէն սայլին տակ մնալով կը մեռնի: Ռուբէն որդին է Հարկէ Պետրոսի, իսկ երգին
մէջ յիշուած Մուքէն՝ որդին Ռուբէնի:

ՕՐՕՐ

Օրօր էնիմ՝ քընացընիմ, տարտ օյ, օյ,
 Շաքարով շարպաթ խըմցընիմ, տարտ օյ, օյ,
 Աչքեր պապիմ՝ քընուց արթնցնիմ տարտ օյ, օյ:
 Աշուն էր՝ դառնար դարուն, օյ, օյ,
 Ձուն էր հալեր վըր սարերուն, տարտ օյ, օյ,
 Ճամբան բացուեր դարիպնեբուն, տարտ օյ, օյ:

Քու երթալդ եղաւ քանի՛ տարի, տարտ օյ, օյ,
 Աստուած քու գալդ դարձնէ բարի, տարտ օյ, օյ,
 Նամակ գրիմ էլիբ արի, տարտ օյ, օյ:

ՓԱՓՈՒՌԻ

Ամպ էլաւ ամպի նման,
 Նարինայ նիր փափուռի,
 Շաքար իս խանտի նըման,
 Նարինայ նիր եւլն.
 Եար փշրէ թալէ բերան,
 Նարինայ, եւլն.:

Փափուռի վիլ ու վիլայ
 Նարինայ..... եւլն.
 Փափուռ նստեր տուն՝ կ'իլայ,
 Նարինայ...
 Փափուռի շապիկ շիլայ,
 Նարինայ, եւլն.:

Գիշերուն զանգեր զարկին,
 Նարինայ, եւլն.:
 Սանամ Պէզոն մէկտեղ ին,
 Նարինայ, եւլն.:

Աղջիկ քու անուն Սարէ,
 Նարինայ նիր փափուռի,
 Քու ծամեր խառու մառ է,
 Նարինայ, եւլն.:
 Քու բերան կրակ կը վառէ,
 Նարինայ, եւլն.:
 Քու տարտեր գիս կը վառէ,
 Նարինայ նիր փափուռի:

ԿՈՒԼԷ ՀՕՅ ՆԱՐ

Կուլէ հօյ նար, հօյ նար,
 հօյ նարէ,

Կուլէ հօյ նար, հօյ նար,
 հօյ նարէ:

Կուլէ նախիր տանիմ էլլամ ծառ,
 Կուլէ հօյ նար, եւլն.:

Կուլէ խնձոր թալիմ էկօ տար,

Կուլէ հօյ նար,

Կուլէ խնձորի կէս հասուն է,

Կուլէ հօյ նար,

Կուլէ չորս կօչն արծըթուն է,
 Կուլէ հօյ նար, եւլն.:

Կուլէ աղբէր աղբէր ես քէ շուն,
 Կուլէ հօյ նար, եւլն.

Ի՞նչ ես բարձեր քո իշուն,

Կուլէ հօյ նար,

Կուլէ խոնկ ու հինան ու
 արբշուն,

Կուլէ հօյ նար, եւլն.:

Կուլէ կալն էղաւ էրկու էրես,

Թաւեր իս թամազին,
Կայներ իս մուրազին:

Էկուր գիրկ ու ծոց մըջ բալայ խոտին,
Էկուր գիրկ ու ծոց մըջ նըխշուն օտին,
Էկուր գիրկ ու ծոց, ջահնամ օրօրոց:

ԼԷՅԼԻ ԽԱՆԷ

Տընէն էլար ալ կապեցիր,
Քու բարակ մէջ շալ կապեցիր,
Լէյլ, Լէյլ, Լէյլ խանէ,
Լէյլ, Լէյլ, նազը խանէ:
Տընէն էլար էրի պէրի,
Քէ կը կանչին որբուէրի,
Լէյլ, Լէյլ, եւլն:

Տընէն էլար ալաշ-քուլաշ,
Մըծերն ի ծոց բամպկի քուլաշ,
Լէյլ, Լէյլ, եւլն:
Արտ մը լարի տամ խիարի,
Ճամբիմ իմ եարոջ տիարի,
Լէյլ, Լէյլ, եւլն:
Լէյլ, Լէյլ, Լէյլ խանէ,
Վըր կարմընջին ցորեն ցանէ:

ՀԱԲԼԲԱՆ

Հարլբան քաշքա ես նալպանտ
Ըլլիմ,
Վերի շուկէն պանտ ըլլիմ,

Ուռուսի սալտատ ըլլիմ,
Հարլբան, ջանէ ջան,
Սինամ սարեր քէ զուբպան:

ՏԷՐԸՔՕ

Տէրըքօն ելաւ կ'երթայ էգին,
Ինքն ու ուր ջուխտակ տէգերկին,
Սօլեր հագան իջան էգին,
Ո՞ր է մըր հերուան խփան գին,

Կըպեր ին իրարու հօր տին:
Տարբերակ --
Տէրըքօ արտեր բալայ փուշ էր,
Գեղի միջի եարն անոյշ էր:

Սասունցի խումարէն հաւաքուած, Հալէպ, 20 Սեպտ.ի, 1951ին:
խումար Շարոյեան՝ Կուսգեղցի (Սասնոյ շրջան), հօր անուն
Սարգիս, մօր անուն՝ Նուպար: Շրջան մը ապրած է Հագրօ գիւղա-
փաղաքը, ապա գաղթած է Հալէպ: 1951 թ.ին 63 տարեկան էր եւ
կը բնակէր Հալէպ:

ԽԱԹՈՒՆ ՍԿԵՍՈՒՐ

Խաթուն սկեսուր, խաթուն
սկեսուր,
Խրատ մը տուր քու ծուռ տղին,
Չերթայ պառկի ձիու մըսուր,
Բոլոր էրսէն, սեւ աչերուն
Ի՞նչ էր խըսուր:

Խաթուն սկեսուր, խաթուն
սկեսուր,
Խրատ մը տուր քու ծուռ տղին,
Չերթայ պառկի բարակ մէջկուն,
Դուրան ճակտին ի՞նչ էր խըսուր:

ՀԱՅ ԿՈՒՆԻԻՉԱՐ

Հայ Կուլիզար, վայ Կուլիզար, Գեյլէ տեսնանք զմըր եարեր :
 Շէկչէկ մազեր, նիւշուն մէզար,
 Գու պապու աշուին ջրոնէր,
 Չհանէր զբըրի դինու պազար :
 Զուր մը Թափի վըր քարերուն,
 Զըլայ Դանօն կը պաղընկի
 վըր սալերուն,
 Զուր մը կ'իգէր բանձրիկ սարին,
 Կը հորքըրի վըր իմ չոքերուն,
 Կու կաթկթէր մարմար քարին,
 Խուլիին կ'ընկնի մըջ ջրջերուն :

ՊԱՐԵՐԳ

Տանէն էլայ տանքով դացի, խորտիկ,
 Սալվար տուն չէր նստայ լացի, խորտիկ,
 Սալվար դացի բաղնիք լուաց, խորտիկ,
 Ուր դուլիսի լաջան մանցի թաց, խորտիկ,
 Ուր շող ու մող ծոցերն է բաց, խորտիկ,
 Տղան տեսաւ խելաց գնաց, խորտիկ :

Վերեւ մըր տան առուն հանած, խորտիկ,
 Ներքեւ մըր տան առուն հանած, խորտիկ,
 Շուրջ ու բոլոր ռեհան ցանած, խորտիկ :

Վերեւ մըր տան բուռ մը տանձի, խորտիկ,
 Ներքեւ մըր տան բուռ մը տանձի, խորտիկ,
 Մըլսս Բակոբի մուրուք խանձի, խորտիկ :

Վերեւ մըր տան բուռ մը հըցի, խորտիկ,
 Ներքեւ մըր տան բուռ մը հըցի, խորտիկ,
 Մըլսս Բոլոյի մուրուք խանձի, խորտիկ,
 Ուզեցի Խըմլօն չտուեց ընձի, խորտիկ :

ԳՈՎԵՐԳ

ՏԵՐԸՆՏԵՍ

Բոլոր էրես կրծիկ ջանայ,
 Սղջիկ չէր ջու լու մանա,
 Յոյս կ'էնիմ Երուսաղէմ,
 Ճամբան կ'էրթէր Արապըսթանա,
 Սեւ մազեր զըրկի զգօտին,
 Կու մտնէր ճուխ ռէհանա :
 Տէրընտես, տնտես,
 Փըթըրն տես,
 Հացու կէս,
 Դարման կէս,
 Դատաստան չէլնես սեւերես :

Մշեցի Ասանէք Օհանեանէ հաւաքուած, Հալէպ, 20 Օգոստ.ի, 1951-ին:

Ասանէք Օհանեան՝ Մշոյ Դաշտի Գոմս գիւղէն: Հօր անուն՝ Հերֆօ: 14 տարեկանին գաղթականութեան հանուած: 1951 թ.ին 50 տարեկան էր: Կը բնակէր Հալէպ:



ՍԻՐԵՐԳ

Ջաղցի թեւեր պոքի է,
Աղջիկ տղին հոգի է:

Աւայ Մուրաա զըզի մըզի,
Ախ սուրբ Սարգիս մըռնիմ զըզի,
Քու ծոցով թասով ջուր տուր
ընծի,
Կալ ու կտէն բրծնամ՝
Կ'առնիմ զըզի:

Ջաղցի դռներ տաշուկ է,
Խալամ վրայ քաշուկ է,
Աղջիկ տղին խաբուկ է:(4)



Ջաղցի թեւեր աւաղ է,
Աղջիկ տղին մարաղ է:
Ջաղցի բոլոր կամար է,
Աղջիկ տղին համար է:(5)

Աղջի տընաւեր էկօ էրթանք
թիլու ճամին,
Ես քէ կանչիմ դուն ըսէ ամին:

ՕՐՕՐ



Վալայ կ'առնիմ Ձէլոյի քուր,
էրթամ Բաղէշ բերիմ նուռ,
Տանիմ զարկիմ ժամու դուռ,
Ամէն նոին պագ մը տուր,
Չեղաւ մեծ քուր, թըղ էղնայ
պգտիկ քուր:

Օրօր էնիմ հըտ օրոցին,
Ծծիկ իտամ գըրկանոցին:
Օրօր էնիմ զընացընիմ,
Դուն պգտիկ իս մեծացընիմ:



Աշուն է թողին քոչեր,
Գարուն է նախշուն պոչեր:

ՊԱՐԵՐԳ

Սար սար, ես սարերու ծաղիկն իմ,
Ճան ճան, ես Լեւոնի քուրիկն իմ.
Տո՛ւն արի, տո՛ւն արի, տո՛ւն աղբէր,
Արի՛, իմ խորոտ աղբէր:

4) Խնուսցի Գարեգին սոյն բառը կ'ուզէ փոխարինել մաշուկ է բառով, որ ո՛չ միայն իմաստին խոստը չի համեմատիք, այլ նաեւ կը դառնայ նոյնայանգ տաշուկ է եւ մաշուկ է-ի նետ:

5) Սոյն վերջին երկատուրը գրի առած ենք Խնուսցի Գարեգինէ:

Սար սար, ժամի դռնէն դուրս էլայ,
Ճան ճան, արեւի պէս լուս էլայ.
Տուն արի, եւլն.:

Սար սար, հաց իմ թխեր փրփրի,
Ճան ճան, վատ խօսողը գրգռի.
Տուն արի, տուն արի, տուն աղբէր,
Արի', իմ խորոտ աղբէր:

ՇՈՂԵՐ ՃԱՆ

Շօրօրա', շօրօրա', Շողեր ճան,
Ամպել ա ձուն չի գալիս, Շողեր ճան,
Դուն օրօրա, դուն շօրօրա, Շողեր ճան,
Ամպի տակէն ձուն կ'երեւայ, Շողեր ճան:

Սիրտս կրակով լեցուած, Շողեր ճան,
Մթնել ա տուն չի գալիս, Շողեր ճան
Դուն օրօրա, դուն շօրօրա, Շողեր ճան
Ամպի տակէն ձուն կ'երեւայ, Շողեր ճան:

ԳՍՐԵՐԳ

էլայ տանիք տափ քալեցի,
Լանկէն գրրկի էրդիկ բացի,
Լալէն տուն չէր, նստայ լացի:
Կապեր վրէն խանչալ ու թուր,
Գացեր կայներ Գոհարի դուռ,
Գոհա'ր, Գոհա'ր, աղջիկդի տուր:

Լալէն դացեր դետն ի լուաց,
Տաշտեր կոտրաւ ջրեր դնաց,
Ապտալ աղի շորեր մնաց:
Զօրով կի տաս, խաթրով
կը տանիմ,
Կուռի կոճով դուռ կը ծեծիմ,
Ապտալ աղա, ապտալ ու ծուռ,
Շամիր տառնով հարս կը հանիմ:

ՏՈՒ ՏՈՒ

Տու տու, տու տու, Մշեցի,
Պուտկով փլաւ էփեցի,
Տարայ տուի հովիւին,
Հովիւ տուաւ ինձ գառ մի.
Գառ տարայ տուի Աստըծուն,
Աստուած տուաւ ինձ աղբէր:
Աղբէր, աղբէր ես քէ շուն,
Խունկ ու խընէն ապրշուն.
Իմ թամաքէն ձին տուէք,
Հեծնիմ երթամ Եղիշէն.
Եղիշէն ինձ ճաշ եփեր է,
Դըզալ դըզալ ցըւրեր է,

Դըզալ մը ինձ պահեր է,
Օսկի սընտուկ դըրեր է,
Օսկի կատուն կերեր է:

Փշտայ փշտայ փշտամանի,
Առուէ առու թըռուցի,
Քառսուն կաքաւ բունցի:
Առայ բերանս լեղի էր,

Թքուցի դետին զինի էր.
Գինի գինի զինըստան,
Աղբէր մ'ունիմ Ձինըստան,
Ձինարներու հետ շուր կ'իգէր,
Ուր շորերէն հոտ կ'իգէր,
Լուի լուի չիստըկեր,
Վարդի ջըրով կ'իստըկէր:

ԱՂՕԹՔ

Ձորս գլուխ Աւետրան,
Ութ գլուխ Սաղմոս,
Սուրբ Գրիգոր Նարեկացին,
Պահես ու պահպանես,
Խաչես ու խաչակնքես,

Անուն հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն
Սրբոյ, ամէն:

✽

Ճրագ ճրագ ճշմարիտ,
Ճշմար խաթուն մարտիրոս,
Իմ սիրելի Քրիստոս:

ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐ

Փշի փշի բանըռուղա,
Ապըլպըմէ սանտուղա,
Ես պարոնի տղէն իմ,
Թագաւորի փեսէն իմ:
Տաու տաու տաստանա,
Կուկլուլու լու բարիլուս,
Մըր ճետ խօսաւ տապաղանէն,
Ինչ կէր կտուց խոնկն ու խանէն:
Խարս պառկաւ բերաւ լաճ,
Անուն դրին քարէ խաչ,

Բղբոջ բաղարջ՝ Սղերդու փարչ:

✽

Ինչ մինչ մանեմակ,
Պասէ լանէ պըլըստրակ,
Է ու պէ, արգոյ բարքօ,
Վի վօ վակ:
Ինա մինա օճիտինա,
Շամա խազի կաթըր կաճի,
Ապըլպընի չըխտի տըլի:

ՄԱՆՈՒԿ ԽԱՂՑՆԵԼՈՒ ԽԱՂ

Հար ցցում,
Մեղր ու կարագ,
Գնա մտիր պապու մարագ,
Կեր մեղր ու կարագ,
Վազէ էկուր:

Ալ ու ալուան իս հագեր,
Կարմիր լաջայ իս կապեր,
Ինձ ասա գլխիդ մատաղ,
Պինի շտոովդ ով կարեր:
Աղբէր ջան քէ դուրբան,
Մըր կողմանէ դու իս, դու:

ՊԱՐԵՐԳ

Ձրմ ու չրմ, չրմ կրնայ խաղայ, Բոպիկ իմ, օտըս կը ցաւայ:	Մայրամ էկաւ ՈՂԼԹէն, Կարմիր էրես կը կաթէր, Պազ մը տուր Աստծու խաթէր, Կանաչ ու կարմիր Մայրամ:
Ձրմ ու չրմ, չրմ կրնայ խաղայ, Անօթի փորըս լէ կը ցաւայ: Դա նա նայ, նա նա, նա նա նայ, Դա նա նայ, նա նա, նա նա նայ:	Յարզերտու սար խըճերով, Մայրամ նխշուն բըճերով, Յարզերտու սար Հերկ ու եղ, Մայրամ կ'ըմընի Հալուկ եղ:
Սարեր ու ձորեր ձուն կ'իզէր, Մայրամ տանկին դուր կ'իզէր. Հա Մայրամ, Մայրամ, Մայրամ, Կանաչ ու կարմիր Մայրամ:	Հարաւ քաֆուր ու քամին, Ստանպոլայ ջուխտակ ամին, Էկան զՄայրամ կը տանին:

Պիթիլսցի Առփիկ Մկրտիչեանէ հաւաքուած:
 Առփիկ Մկրտիչեան՝ Պիթիլիս քաղաքացի: 1951 թ. ին 70 տա-
 րեկան էր եւ կը բնակէր Հալէպ:

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԵՐԳ

Գետն էկաւ կոճ էրեր, Մըր Հարս պառկաւ լաճ էրեր:	Ճրագն ի դուռ կը վառէր, Տուշմընի դուռ կը պատուէր:
Սար մը կար Հընտայ քաղաք, Ճուղն ա տուեր քաղէք քաղաք, Ամէն ճուղին ջուխտակ ճրագ:	Հարսեր էլան մեծ բաղնիքէն, Պազ մի առայ շող էրեսէն, Ոնձոր թափաւ ծոց ու ճեպէն:

Մշեցի Անգիմէէ հաւաքուած:

Կաթէ աղբուր, մոմէ տաճար, Ես էնիմ Աստծու ճար, Աստուած էնէ զիմ հողու ճար:	Մըտօ Արոյի եղ մըր ցցում: Դոստ մը ունիմ Պուլանուխ, Կարմիր էրես աչքեր թուխ:
---	---



Ցցում, ցցում, ցցում, Տանիմ բերիմ զըմբըցում,	Գացի կանայ դոմու դուռ, Մաքին ծնաւ բերեց ուլ:
--	---

ճակիլով կը հասնին տուն ուր ժամանակ մը ետք եղբայրը տղայ գաւակ մը կ'ու-
 նենայ: Բայրը միշտ կ'օրօրէ իր եղբորս հետընդհանր օրքանը եւ կ'երգէ յիշեալ օրքը:
 Հարց կու տամ իրեն քէ ի'նչ է խօսեքում իմաստը, կը պատմէ եղիլուքիւնը եւ
 կ'երթան կը գտնեն մանուկը, որ ողջ էր մնացած քանի մը տարիէ ի վեր:

Տալիւօ, տալիւօ, սէյրանէ
Տալիւօ, տալիւօ, սէյրանէ
Քօթիէ մէրէ Հայրանէ :

✽

Նէնէ, նէնէ, նիննայէ,
Տըլօ տանկէմըն նայէ :

✽

Քար մը թալիմ կը ցոլայ,
Ինչ պլպուլի կը խօսայ :

✽

Յովան լուսին լուսով էր,

Շան աղջիկ շատ քէսով էր :

✽

Երթանք Աւրան,
Քըշտինք տաւրան :

✽

Ասող մը ինչպէս կը ցոլայ,
Քընց պլպուլի կը խօսայ :

✽

Մազէ կարմունջ անցնելու,
Պաշար չկայ տանելու,
Աստծու ջուսպ իմ տալու :

Հաւաքուած գանգաւաններէ :

ԿՍՏՈՒԻ ԳՈՎԱՆՔ

Փշիկ, փշիկ բանպուղիկ,
Ապրչըմէ սանտուղիկ,
Ես բալուլայ տղէն իմ,
Թապաւորի փեսէն իմ :

✽

Ջուր բրծի սարէն կ'իզայ,
Մանոր մանոր քար կ'իզայ,
Ձիւր ու չամիչ հետ կ'իզայ :

✽

Մարու տակի պաղ աղբուր,
Օսկէ թաս, արծըթէ ջուր,
Մէկ դու իմէ, մէկ ընծի տուր :

ԱՂՕԹՔ

Կուս Մարիամ դու կուս իս,
Հոգով սրտով դու լուս իս,
Լուսէ քամար իս կապի,
Քու հոգին մըզի համար իս բերի :

ԱՆԷԾՔ

Տէր Ջաքարէն, Մարգարէն,
Կուսնի տղէն, Թութկայ Մխէն,
Ժամ կարդայ Որպուկ Վարդան,
Հալածիմ թփուխս, օրչնիմ սփուխս,
Թալիմ աղէս՝ գրգռիս :

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

Բալայ խոտ – խոտի տեսակ մը
Բէն – ուս
Բիմուկ – կարկտնուած
Բոլոր – կլոր
Բուս – գուլպայ
Բրծնալ – ագտիլ
Գումիլ – հաւաքիլ
Գագռիլ – վառիլ

Դեզիլ – հիմայիլ
Դումպան – շապկընկեր
Դուրան – հարք
Եագար – կը գրէ
Ջիւան – որոմ
Էնիլ – ընիլ
Էրած – երագ
Թաժայ – թարմ

Թալել - մետել	Մալուլ - տխուր
Թիպուր - փետուր	Ուր - իր
Թերմաշ - 1) անտեր, 2) կիսամաշ	Ուրին - իրեն
Թուման - թռչող	Չախու - դանակ
Իգալ - գալ	Չալիք - արտաստեղի
Իմալ - ինչպէս	Չքոր - չքողուց
Իստըկել - մաքրել	Պանտ - թումր
Իստուսնա - վրայ	Պաշ - գլուխ
Լակլակ - արագիլ	Պատիկ - կռնակ
Լանկարի - խոշոր ափսէ	Ջահտէ - փողոց
Լկիլ - կակուղնալ, հալիլ	Ջուապ - պատասխան
Խալամ - մատիտ, գրիչ	Ջրըքալ - իյնալ
Խանտ - ֆարացած շաքար	Ռըսիս - բախտ
Խշիմ - անփորձ, համբակ	Սալտատ - գինուր
Խոջ - արու ոչխար, խոյ	Սկիլ - սուգուիլ
Խուպէ - կռնածու տանիք	Ցըւրել - ցրուել
Խուր - թերի	Քամար - գոտի
Կանթ - կոթ	Քթոց - կաքը մէջը կքելու աման
Կանկիչ - գործիքի տեսակ մը	Քոռնալ - կուրմալ
Կալոշ բոթին - կօշիկի տեսակ մը	Քուլաշ (կուլաշ) - գօտեմարտ
Կօշէ - անկիւն	Օթըրմըշ - նստած
Հասրաթ - կարօտ	Օրշնել - օրհնել
Ճետ - աֆաղապ	Փայտա - օգուտ
Ճիժ - երախայ	

THE POPULAR SONGS OF TARON

ARDASHES DER KHATCHADOURIAN

The folklore of the Armenian people is quite rich. The literary gleanings of the last hundred years has saved much of the oral creative literature of the Armenian people who have expressed in it their character, daily life and progress through thick and thin. A collection of the popular songs of the world of Taron has been made possible through the personal contribution of the Taron inhabitants — Karekin Mgrditchian, Aznive Sevoyan, Khoumar Sharoyan, Assanet Ohanian, Kharzo Hotoyan, Sofig Mgrditchian, and Almast —, who barely escaped the massacres of 1915 and took refuge in Syria. A. Der Khatchadourian collected these fragments in the year 1951.